

ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



Քրիստոսաբանությունն ուսումնասիրում է Հիսուս Քրիստոսի անձի և դեմքի մասին Եկեղեցու ուսմունքը:

Աստծո Որդին մարդեղացավ մարդկության փրկության համար և Իր անձով իրագործեց փրկագործության խորհուրդը: Հետևաբար Քրիստոսի անձով է միայն պայմանավորված մարդու փրկությունը, որովհետև Քրիստոսի անձն ու գործն անքակ կերպով կապված են միմյանց: Այսպես ենք ասում, քանի որ մարդեղացման առաջին իսկ պահից՝ ավետումից, սկսվում է նաև մարդկային ցեղի փրկությունը: Նաև չենք կարող խոսել Հիսուս Քրիստոսի անձի մասին միայն՝ առանձնացնելով Նրան Իր փրկչական գործից: Մարդեղացման և Աստծո Բանի՝ մարմնով աշխարհ գալու նպատակը մարդու փրկությունն ապահովելն էր: Սա նշանակում է, որ չենք կարող խոսել փրկության մասին առանց Քրիստոսի, և հատկապես առանց ճշմարիտ դիրքորոշան Քրիստոսի անձի և դեմքի հանդեպ: Մրա պատճառով էլ Քրիստոսաբանությունը համարվում է Փրկաբանության հիմքը: Կարող ենք ասել նաև, որ Քրիստոսաբանությունը միաժամանակ նաև Փրկաբանություն է, քանզի Քրիստոսի իրականացրած փրկությունն արդյունք է Նրա աստվածամարդկային անձի և դեմքի:

Աստծո Որդու մարդեղացումը

Մարդեղացումը, որպես ծրագիր, անժամանակ կերպով կար Աստծո մտքում, և իրականացավ, «երբ ժամանակը իր լրումին հասավ» (Գաղ. 4:4):

Բանը մարմնացավ կամ մարդեղացավ գերբնական կերպով՝ Ս. Հոգու ներգործությամբ: Այդ իսկ պատճառով այն համարվում է մեր հավատի մեծագույն խորհուրդներից մեկը, որի էության մեջ մարդկային միտքն անկարող է թափանցել: Հավատում ենք, որ մարդեղացումն իրականացավ հենց սկզբից՝ հղության առաջին իսկ վայրկյանից:

Մարդեղացման մասին նորկտակարանյան վկայությունները հստակ են, իսկ Հին Կտակարանում առաջին վկայությունն այս առումով համարվում է Ծննդոցի այն դրվագը, ուր Աստված խոստանում է օձի ջախջախումը կնոջ սերնդի կողմից (Ծննդ. 3:15): Ապա կարելի է վկայակոչել Եսայի մարգարեի այն մարգարեությունը, թե՛ «Ահա կույսը պիտի հղիանա և որդի պիտի ծնի, և նրա անունը Էմմանուել պիտի կոչեք» (Եսայի 7:14):

Մարդեղացմամբ Աստծո Որդին այլևս մուտք է գործում մարդկության պատմություն և այն բաժանում երկու մեծ մասերի՝ նախքան Քրիստոս և Քրիստոսից հետո ընկած ժամանակահատվածների:

Հույներն ընդունում են երկու բնությունների անձային միություն (υποστατική ένωση), որ նշանակում է, թե Քրիստոսի մեջ մարդկային բնությունը անձնավորված չէ, այլ վերցրել է Աստվածային Լոգոսի դեմքը: Եվ այս երկու բնությունները միավորված են անշփոթ,

անփոփոխ, անբաժան և անքակ (ασυγχύτως, ατρέπτως, αδιαρέτως, αχωρίστως) կերպով: Առաջին երկու բառերն ուղղված են եվտիքեսականության դեմ, իսկ վերջին երկուսը՝ նեստորականության: Որպես հետևություն երկու բնությունների՝ ընդունում են նաև երկու կամք և երկու ներգործություն, որովհետև կամքը և էներգիան բնության հատկանիշներ են:

Հայ Եկեղեցու դավանանքի համաձայն՝ Քրիստոս կատարյալ մարդ և կատարյալ Աստված է: Իսկ կատարյալ մարդ կամ Աստված նշանակում է անձնավոր: Հետևաբար և՛ մարդկային, և՛ աստվածային բնություններն անձնավոր են, և Քրիստոս ունի մեկ աստվածամարդկային միավորյալ անձ և դեմք: Նույնը կարող ենք ասել բնությունների միավորման պարագային, այսինքն՝ Քրիստոս ունի մեկ աստվածամարդկային միավորյալ բնություն:

Այս միության որպես արդյունք են դիտվում.

1. Երկու բնությունների ներթափանցումը (περιχώρηση) մեկը մյուսի մեջ, 2. Քրիստոսի անձի մեջ երկու բնությունների հատկությունների հասարակական կամ ընդհանուր դառնալը,
3. Բնական որդեգրում Հիսուս Քրիստոսի՝ որպես մարդու,
4. Մեկ երկրպագություն Հիսուս Քրիստոսի՝ որպես Աստվածամարդու, 5. Աստվածացում մարդկային բնության, որը, սակայն, չկորցրեց իր բնության հատկությունները,
6. Սուրբ Կույսի Աստվածածին անվանումը:

Բնությունների ներթափանցում (περιχώρηση)

Ներթափանցում ասելով հասկանում ենք Քրիստոսի երկու բնությունների՝ մեկը մյուսի մեջ լինելու և բնակվելու հանգամանքը: Ներթափանցում հասկացությունը գործածում ենք նաև Երրորդության մասին խոսելիս, որի երեք Դեմքերի գոյության կերպը բնորոշվում է ներթափանցում բառով, այսինքն՝ Երրորդության յուրաքանչյուր Անձի մեջ մշտապես կան նաև մյուս երկուսը: Բայց եթե այս պարագայում ներթափանցման հիմքը մեկ բնությունն է, ապա՝ Քրիստոսի դեպքում՝ Նրա մեկ անձը կամ դեմքը: Նաև եթե Երրորդության մեջ Անձերի՝ մեկը մյուսի մեջ լինելու հանգամանքը կատարյալ է, ապա Քրիստոսի անձի մեջ Աստվածային բնությունն է հիմնականում մարդկային բնությունը պարագրողը, որովհետև սահմանավորը չի կարող անպարագրելին իր մեջ առնել:

Բնությունների հատկությունների հասարակական կամ ընդհանուր դառնալը

Այս ասելով՝ հասկանում ենք Քրիստոսի մեկ Անձի կամ Դեմքի մեջ երկու բնությունների ամենասերտ և իրական միության արդյունքում առաջ եկած գոյակերպը, որով աստվածային բնությունն իր հատկությունները տալիս է մարդկայինին, իսկ մարդկայինն էլ՝ աստվածայինին: Սակայն այստեղ պետք է չափազանց զգույշ լինել՝ չընկնելու համար այն սխալի մեջ, թե իբր այսպես երկու բնությունները վերցնում են և սեփականացնում մեկը մյուսի հատկությունները: Այդ դեպքում առաջ կգար նաև բնությունների շփոթ, որը տեղի չի ունենում Քրիստոսի անձի մեջ, որովհետև երկու բնությունները ոչ թե ի բնե (բնությամբ) են ձեռք բերում իրենց բնություններին մինչ այդ խորթ հատկություններ, այլ հաղորդ են դառնում մեկը մյուսի հատկություններին իրական միության արդյունքում:

Բնական որդեգրում Հիսուս Քրիստոսի՝ որպես մարդու

Հիսուս Քրիստոս Հայր Աստծու բնական Որդին է ոչ միայն որպես Աստված, այլ նաև որպես մարդ, որովհետև մեկ է Հիսուս Քրիստոս և ոչ թե երկուս: Այս իսկ պատճառով խոսում ենք Հիսուս Քրիստոսի՝ որպես մարդու բնական որդեգրության մասին: Սակայն չենք կարող խոսել ողջ մարդկային բնության որդեգրման մասին:

Մեկ երկրպագություն Հիսուս Քրիստոսի՝ որպես Աստվածամարդու

Հիսուս Քրիստոսին երկրպագում և պաշտամունք ենք մատուցում որպես Աստվածամարդու և չենք բաժանում աստվածայինն ու մարդկայինը Նրա Անձի մեջ: Որովհետև ոչ կարող ենք մարդկայինն անպաշտելի ու աներկրպագելի անվանել, ոչ էլ երկու երկրպագություն վերագրել Քրիստոսին՝ զատելով աստվածայինն ու մարդկայինը:

Աստվածացում մարդկային բնության

Մարդկային բնություն առնելով՝ Աստծո Որդին այն դարձրեց Իր հարազատ բնությունը, բարձրացրեց այն և աստվածացրեց: Սակայն սա չի նշանակում, որ մարդկային բնությունը փոխվեց կամ վերածվեց աստվածայինի: Թեև մարդկայինը

աստվածացավ, բայց մնաց իր հատկանիշներով ու ձևով: Մարդկային բնության աստվածացման արդյունք է, օրինակ՝ այն մեծ իմացությունը, սրբությունը և զորությունը, որոնցով օժտվեց: Հատկապես իմացության մասին Ս. Գիրքն ասում է, որ շարունակ աճում ու առատանում էր. «Իսկ Հիսուս զարգանում էր իմաստությամբ, հասակով և շնորհով...» (Ղուկ. 2:52): Միայն թե չենք կարող ասել, թե մարդկային այդ մեծ իմացությունն ինչ հարաբերության մեջ էր աստվածային ամենիմացության հետ: Դա մնում է անհասանելի մարդկային մեր մտքին:

Ինչ վերաբերում է սրբությանը, ապա դա արդյունք էր ադամական մեղք չունենալու փաստի, որովհետև հղության առաջին իսկ պահից աստվածային բնությանը միացած մարդկային բնությունը մաքրվեց ամեն մեղքից և տկարությունից:

Զորության մասին խոսելիս կարող ենք անդրադառնալ այն բոլոր հրաշքներին, որոնց մեջ հստակ դրսևորվում է Հիսուսի մարմնի զորությունը. «Եվ ամբողջ ժողովուրդն ուզում էր նրան դիպչել, որովհետև նրանից մեծ զորություն էր դուրս գալիս և բժշկում բոլորին» (Ղուկ. 6:19):

Սուրբ Կույսի «Աստվածածին» անվանումը

Մեր Տիրոջ մայրն իրավամբ անվանվում է Աստվածածին, որովհետև նրանից ծնվածն Աստծո Որդին էր: Միննույն ժամանակ Աստվածածնին անվանում ենք միշտ Կույս, որովհետև Աստվածամայրը կույս էր նախքան հղանալը Ս. Հոգով, հղության ընթացքում և ծննդաբերությունից հետո: Եկեղեցին նաև Աստվածածնին վերագրում է հարաբերական անմեղություն: Հարաբերական, որովհետև բացարձակ անմեղ երկրի վրա միայն Հիսուս Քրիստոս էր:

Քրիստոսի երեք հանգամանքները (պաշտոնները)

Քրիստոսի երեք հանգամանքները սերտորեն կապված են նրա փրկագործական տնօրինության հետ: Մեղքի պատճառով մարդ հեռացավ Աստծուց, որի արդյունքում նրա միտքը խամրեց և ընկավ չարի ազդեցության տակ: Հետևաբար, լինելով չարի կապանքներում, մարդն անկարող էր ինքնուրույն գնալ դեպի Աստված: Ուրեմն Աստծո Որդու մարդեղացմամբ սկսված փրկագործությունը կայանում էր նախ՝ 1. մարդու խավարած մտքի լուսավորման մեջ, որպեսզի մարդ կարողանա հասկանալ իր մեղավոր վիճակը և ձգտել փրկության,

2. մեղքի կապանքներից մարդուն ազատելու և խաչի վրա Իր զոհաբերությամբ Աստծո հետ նրան հաշտեցնելու մեջ,

3. հաղթականորեն դժոխք իջնելով, հարությամբ և համբարձմամբ մարդկային ցեղի բարձրացման և աստվածացման մեջ:

Քրիստոսի փրկական այս եռակողմ տնօրինության մեջ կարող ենք առանձնացնել երեք հանգամանքներ. Քրիստոս, որպես Մարգարե-ուսուցիչ, Քահանայապետ և Թագավոր:

Բայց քանի որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի զործն ամբողջական է և անմասնատելի, թեև երեք տարբեր երեսներով արտահայտված, ավելի ճիշտ կլիներ խոսել Քրիստոսի եռակողմ (երեք երես ունեցող) հանգամանքի մասին: «Երեք հանգամանքներ» ասելով՝

շեշտում ենք իսկապես Ս. Գրքով և ավանդությամբ Քրիստոսին վերագրվող Նրա երեք տարբեր «պաշտոնները», իսկ «եռակի կամ եռակողմ պաշտոն» արտահայտությամբ նկատի ունենք այն սերտ կապը և միությունը, որ գոյություն ունի այդ հանգամանքների միջև: Եվ իսկապես, անկարելի է խոսել Քրիստոսի որևէ հանգամանքի մասին առանց մյուս երկուսի: Այսինքն՝ երբ Քրիստոս հանդես է գալիս որպես Մարգարե, միաժամանակ չի դադարում լինել նաև Քահանայապետ և Թագավոր, և այդպես փոխադարձաբար:

Մարգարեական հանգամանք

Մարգարեական հանգամանքի մասին ակնարկների բազմիցս հանդիպում ենք Հին Կտակարանում, որ Նոր Կտակարանի լույսի տակ համարվում են Հիսուս Քրիստոսի մարգարեական հանգամանքի նախատիպեր ու սիմվոլներ:

Ավետարաններում տեսնում ենք, որ Քրիստոս Ինքը ոչ միայն ընդունում է առաքյալների կողմից Իրեն վերագրվող մարգարեական հատկությունը («Դուք ինձ Վարդապետ և Տեր եք կոչում. և լավ եք անում, քանի որ իսկապես ե՛մ» (Հովհ. 13:13)), այլև խոսում է որպես միակ ճշմարիտ ուսուցիչ. «Բայց դուք որևէ մեկին ուսուցիչ մի՛ կոչեք, որովհետև ձեր ուսուցիչը մեկ է...» (Մատթ. 23:8): Նաև Հիսուս Քրիստոս խոսում և ուսուցանում է բացարձակ հեղինակությամբ և Իրեն անվանում ճշմարտություն. «Ես եմ Ճանապարհը և Ճշմարտությունը և Կյանքը» (Հովհ 14:6): Այդ իսկ պատճառով էլ Նրա խոսքերը պիտի մնան հավիտյան. «Երկինք և երկիր պիտի անցնեն, բայց իմ խոսքերը չպիտի անցնեն» (Մատթ. 24:35):

Քրիստոսի մարգարեական հանգամանքի մասին բազմաթիվ վկայություններ կան նաև եկեղեցական Հայրերի գրվածքներում: Օրինակ՝ Իգնատիոս Անտիոքացին ասում է, որ Հիսուս Քրիստոս է «մեր միակ ուսուցիչը» և «անսուտ բերանը, որով Հայրը խոսեց ճշմարտապես»:

Քահանայական հանգամանք

Քրիստոսի քահանայական հանգամանքի մասին ևս բազմաթիվ են սուրբգրային վկայությունները: Հին Կտակարանից կարելի է հիշել միայն 109-րդ Սաղմոսի հետևյալ հատվածը. «Դու ես քահանա հավիտյանս ըստ կարգի Մելքիսեդեկի»:

Գալով Նոր Կտակարանին՝ նախ պետք է նշենք, որ Տերն Ինքը շեշտում է, որ եկել է աշխարհ՝ «ծառայելու և իր անձը տալու որպես փրկանք շատերի համար» (Մատթ. 20:28): Այսպես, Քրիստոս, մարդկանց փրկության համար Իրեն զոհ մատուցելով, դառնում է բարձրագույն Քահանայապետ, սրբելով մարդկային ցեղի մեղքերը և հաշտեցնելով նրան Հայր Աստծո հետ: Քրիստոսի, որպես Քահանայապետի մասին է գրեթե ողջ «առ Եբրայեցիս» թուղթը, ուր ուղղակի Տերն անվանվում է. «երկինքներով անցած մի մեծ Քահանայապետ» (Եբր. 4:14):

Հայրերի վկայություններից արժե հիշատակել Եպիփան Կիպրացու խոսքերը. «Սա (Հիսուս Քրիստոս) զոհ, սա քահանա, սա զոհասեղան, սա Աստված, սա մարդ, սա

թագավոր, սա քահանայապետ, սա գառն, սա մեզ համար ամեն ինչում ամեն բան եղող» (Ընդդեմ հերետիկոսությունների):

Թագավորական հանգամանք

Քրիստոսի՝ որպես քագավորի մասին ևս եղած բազմաթիվ վկայություններից կարելի է Հին Կտակարանից մեջբերել 2:6 Սաղմոսը:

Նոր Կտակարանում գրեթե ամեն մի էջում ակնհայտ է Տիրոջ թագավորական իշխանությունը, թե՛ հրաշքներ գործելիս, թե՛ ուսուցանելիս, թե՛ սաստելիս ու հանդիմանելիս: Սակայն առավել բացահայտ կերպով թագավորական Իր իշխանությունը դրսևորվում է խաչելության, հարության և համբարձման ժամանակ: Իսկ իր ամբողջ փառքով ու շքեղությամբ պիտի հայտնվի Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ: Դրա համար էլ Ս. Գիրքը Քրիստոսին չի անվանում պարզապես թագավոր, այլ՝ Թագավոր թագավորաց և Տեր տերանց. «... Նա Տերն է տերերի և Թագավորը՝ թագավորների» (Հայտ. 18:14):

Վերոհիշյալ վկայությունները ցույց են տալիս, որ երեք հանգամանքներից յուրաքանչյուրն էլ առանձին-առանձին վերագրվում են Հիսուս Քրիստոսին: Բայց պետք է նշել, որ երեք հանգամանքները միասին վերցրած ևս համընկնում են Հիսուսի անձում: Որպես հաստատում այս բանի, կարող ենք վկայաբերել հետևյալ խոսքը. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և Կյանքը» (Հովհ. 14:6), ուր ի հայտ են գալիս երեք հանգամանքներն էլ. ճանապարհ (թագավորական), ճշմարտություն (մարգարեական) և կյանք (քահանայական): Որպես այս երեք հանգամանքներն էլ իր անձի մեջ կրող՝ Հիսուս Քրիստոս իրագործում է մարդկային ցեղի փրկությունը: Ապրելով հոգեմարմնավոր կատարյալ սուրբ կյանքով՝ Հիսուս Քրիստոս նաև որպես մարդ դառնում է այն միակ անձը, որ կարող էր ներկայացնել ողջ մարդկությանն Իր անձի մեջ և Իրեն գոհ մատուցել բոլորի մեղքերի համար:

Այս ներկայացուցչական զոհաբերության մասին են վկայում Հիսուսի խոսքերը, թե մարդու Որդին եկավ «ծառայելու և իր անձը տալու որպես փրկանք շատերի փոխարեն» (Մատթ. 20:28): Իսկ Վերջին Ընթրիքի ժամանակ Իր Արյան համար ասում է. «Խմեցե՛ք դրանից բոլորդ, որովհետև այդ է նոր ուխտի իմ արյունը, որ թափվում է շատերի

համար՝ իրենց մեղքերի թողության համար» (Մատթ. 26:28): Այստեղ պետք է նշել, որ Քրիստոս, որպես ներկայացուցիչ ողջ մարդկության, անկախ նրանց բնականության վայրից ու ժամանակից, Իր վրա առավ բոլորի մեղքերը և խաչվեց, սակայն Ինքը մնաց անմեղ անգամ մարդկության մեղքն Իր վրա առնելու դեպքում: Կարևոր հանգամանք է, որ մեր Տերը մեկ անգամ և մեկընդմիջտ գոհ մատուցեց իր անձը, ի հակադրություն հինկտակարանյան բազմաթիվ ու բազմազան զոհերի. «Իսկ Քրիստոս մեկ անգամ առ միշտ կատարեց այդ բանը (զոհաբերությունը), քանի որ ինքը իրեն՝ պատարագ մատուցեց» (Եբր. Է 27):

Խաչի վրա իր քավչարար մահվամբ Քրիստոս դառնում է նաև միջնորդ նոր ուխտի, ինչպես ասում է Պողոս առաքյալը. «Ահա թե ինչու նա նոր ուխտի միջնորդ է, քանի որ իր մահը առաջին ուխտի ժամանակ գործված հանցանքների քավության համար եղավ...» (Եբր. Թ 15):

Միևնույն ժամանակ Քրիստոս Իր մահով հաղթում է մահվանը և քանդում նրա իշխանությունը: Արդեն Խաչի վրա մահվան առաջին իսկ պահից սկսվում է մահվան (չարի) իշխանության կործանումը, որովհետև Քրիստոսի մարմինը, որից հոգին բաժանվեց մահվամբ, երբեք չենթարկվեց քայքայման բնական օրենքին, այլ մնաց անապական, իսկ հոգով էլ իջնելով դժոխք՝ մահվան իշխանությունից ազատեց կապյալ հոգիներին և այդպես լիովին կործանեց մահվան թագավորությունը: Այսպես կատարվեց նաև Սաղմոսում եղած մարգարեությունը, թե՛ «չես լքի իմ հոգին դժոխքում, ոչ էլ քո սրբին ապականություն տեսնել կտաս» (Սաղմ. ԻԵ 10): Մահից հետո Տիրոջ մարմինը մնաց անապական, որովհետև աստվածությունը չլքեց մարմինը, ինչպես նաև միավորված մնաց դժոխք իջած հոգու հետ: Այսպես Քրիստոս և՛ Իր անապական մարմնով, և՛ դժոխք իջած հոգով, որոնցից անբաժան մնաց աստվածությունը, հաղթում է մահվանը և կործանում չարի իշխանությունը: Եվ թեև Քրիստոսի քարոզությամբ դժոխքում գտնվող հավատացյալ հոգիները հավիտենական մահից անմիջապես ազատվեցին, բայց և այնպես մարմինների հարությունը և հոգիների հետ վերամիավորումը կլինի միայն Երկրորդ Գալստյան ժամանակ: Որպես նախօրինակ այդ հարության կարող ենք համարել Տիրոջ՝ դժոխք իջնելուց և քարոզելուց անմիջապես հետո հարություն առած սրբերին. «...և ննջեցյալ սրբերի բազում մարմիններ հարություն առան ու նրա (Քրիստոսի) հարությունից հետո գերեզմաններից ելնելով՝ մտան սուրբ քաղաքը և շատերին երևացին» (Մատթ. ԻԷ 52-53):

Ավարտելով Քրիստոսաբանության այս համառոտ ակնարկը՝ պետք է նշենք, որ այն ամբողջական չէ, այլ շատ հակիրճ անդրադարձ է Քրիստոսաբանության հիմնական թեմաներին ու խնդիրներին:

Աղբյուր՝ <https://shavigh.am/>